

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### «Բազմավէպ»

Ս. Ղաղարի վանքի չորս պատերից դուրս ոչինչ չտեսնող «Բազմավէպ» ամսատետրը վերջերս զարմանալի լանդզնութիւն է ձեռք բերել. Հայ կեանքից անջատուած ամսատետրը միտումներ ունի ուստի՛կալ կեանքի, գործերի, մանաւանդ գրականութեան ու մամուլի վերաբերմամբ քննադատի դեր կատարելու: Այս անհասանելի նպատակով նա իւր էջերը բաց է արել մի քանի ուստի՛կալ տղաների համար և թուլ է տալիս նրանց այնտեղ լուանալ իրանց կեղտերը: Այդ տղաները երբեմն խիղախում են քննադատել այնպիսի ուստի՛կալ գրական երկեր, որոնց իմաստն ըմբռնելու համար դեռ շատ տարիներ պիտի դարգացնեն իրանց միտքը: Ասպարէզ հանել այդ «քննադատներին» աննշան անունները, կը նշանակէ ծառայել նրանց նուիրական նպատակին, այն է լալտնի կացուցանել նրանց փոքրիկ անձնաւորութիւնները: Ուստի այդ տղաների մասին լուենք, և դա կը լինի նրանց ամենամեծ պատիժը. որովհետեւ ցուցամոլութեան ախտով վարակուած թղուկների համար աւելի մեծ պատիժ չը կայ քան նրանց անլալտութեան մէջ թաղելը...

Դառնանք իրան, «Բազմավէպին»: Մենք շատ լաւ գիտենք, թէ այդ տետրը ինչու է մեզ ամեն ամիս հայտնուում և «Մուրճ» ու «Մշակին» շողոքորթում. և այս բոլորիս կը բանանք նրա դիմակը:

Յալտնի է. որ «Բազմավէպը», չը նալելով իւր կէտարեակ գոլութեանը, մեղանում ոչ ոքի հետաքրքրութիւնը չի շարժել, ոչ մի շրջանի ընթերցանութեան նիւթ չի դարձել: Ռուսահալբը նրա մասին այնչափ գաղափար ունին, որչափ մի հետադարեան ձեռագրի մասին: «Բազմավէպը» ոչ մի ընտանիքում չի ստացում, ոչ մի տեղ նրա անունը չի լսում: Կան մինչև անգամ մեղանում լալտնի դրողներ, որոնք չը գիտեն թէ նա երբ է լուս տեսնում և ինչու: Շատ շատ կարելի է այս կամ այն խմբագրատան կամ գրամուլի սեղանի վրայ երբեմն տեսնել քան տեսակ տաւերով և թանկագին թղթի վրայ տպած

մի քառանկիւնի տետր, որի թերթերին հաղւե թէ թղթահատ դիպչում է: Լետաքրքրուողը վերցնում է այդ տետրը, նայում նրա նկարները և զարմանում: Վենետիկցի հայրերը ապրելով Եւրոպայում և ունենալով իրանց ձեռքի տակ հարուստ տպարան և բոլոր լարմարութիւնները, այսուամենայնիւ այնքան անճաշակ են, որ նկարներն անգամ չը գիտեն կանոնաւոր դասաւորել: Լարուստ տառեր, ընտիր թուղթ և անճոռնի քառանկիւնի մի տետր, որից կաթսիկութեան հոտ է փչում: Գալով բովանդակութեանը, չը գիտես ինչ գրականական ճաշակի է ծառայում տետրը: Նրա մէջ երբեմն տպւում են այնպիսի եւրոպական երկերի թարգմանութիւններ, որոնք վաղուց են իրանց հայրենիքներում մոռացուած. և մի այնպիսի լեզուով, որ ներկայացնում է տաճկահայ, ռուսահայ բարբառների և գրաբառի մի տափօրինակ անհանկանալի խառնուրդ: Բաց Վենետիկի հայրերը լեզուագէտներ են համարում. իսկ լեզուագէտներին վիճակուած է կարծես շունենալ գեղեցիկ ոճ... Ուղում ևս կարգալ տետրը, և հէնց առաջին սողերից զգալով մոլեռանդ կաթսիկութեան հոտ՝ ականալ ձգում ես մի անկիւն ներողամիտ ժպիտն երեսիդ:

Հասկանալի է, որ այսպիսի մի արհամարհանք պէտք է վիրաւորական լինէր «Բազմավէպի» համար, որի վրայ ինչ և է բաւական դրամ է ծախսուում: Եւ անա այդ արհամարհանքից ազատուելու համար՝ տետրը վճռել է ինչ միջոցով և ինչ բարտառական գնով էլ լինի, իւր անունը լալտնի կացուցանել ռուսահայերին, իւր մասին խօսել տալ: Դրա համար նա ընտրել է մի եզուրիտական ճանապարհ, որ սակայն բաւական լարծուն է: Նա սկսել է շողոքորթել ռուսահայ մամուլի մի մասին և հայրուել միւս մասին: Եւ անա իւր ամեն մի համարում տետրը եղկելի հացկատակի պէս լիզում է մէկի ոտները և բարբառնում միւսի դէմ: Մարդ պէտք է շատ պինդ ննարդեր ունենայ, որպէս զի չը վրդովուի կարողալով այն շողոքորթութիւնները, որ տետրը շաւղում է «Մուրճին» ու «Մշակին»՝ այն խեղճ լուսով որ սոքա կարող են օգնել նրա բաժանորդագրութեան: Ինչ որ այդ երկուսի մէջ է տպւում, արժանանում է «Բազմավէպի» գովասանքներին, իսկ ինչ որ «Լուսայում» կամ ուրիշ հանդէսներում՝ աջ ու ձախ հայրուում է՝: Տետրը գիտէ, որ գովելով «այդ թերթերը» ստիպուած է հայրուել «Լուսային», որոնց մէջ կալ ուղղութիւնների տարբերութիւն: Գիտէ, որ եթէ, Տէրը մի արագէտ, մի որ սխալմամբ գողի «Լուսային» մէջ տպուած որ և է լսողուած, իսկույն պիտի զրկուի նոցա աջակութիւնից: Եւ անա ձեռքը ձեռք է լուանում—«Մուրճ—Մշակը» պարաքի տակ չեն մնում և «Բազմավէպի» գովասանքներին պատասխանում են անվերջ ռեկլամներով: Դուրս է գալիս ինչ: Դուրս է գալիս, որ աշխարհի երեսին չորս եղբայր կալ՝ «Մուրճ» ու «Մշակ», «Բազմավէպ» ու անոր կրտսերը «Գեղունի»: Զորսն էլ միմեանցից գոհ են և չորսն էլ միմեանց հիւրասիրում են:

արևելեան «սելեամիներով»։ Բանն ալնտեղ է հասել, որ «Գեղունիի» մէջ տպուում է մի խալտառակ պատկեր. մի սեղանի քով նստած են ուսանալու լալտնի գրողներ. մէջ տեղ Հ. Ալիշանը, իսկ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կանդնած է վերջինի առջև... Ահա թէ լանդգնութիւնը ինչ է անում։

«Բազմավէպի» վերջին համարում տպուած է մեր դէմ մի նոր լուսանք, իբրև թէ մենք «Լուսան» երկամտեայ ենք դարձրել նախանձելով «Մուրճի» լալտողութեան։ Իբրև թէ այդ ամսագրի դափնիները մեզ հանգիստ չեն տուել։ Արդ՝ ձրն է «Մուրճի» լալտողութիւնը, նիւթականը, թէ բարոյականը, եթէ նիւթականը, ապա ինչու պ. Կրասիլնիկեանը ստիպուած եղաւ 24,000 ուսուցում գնուած ամսագիրը ծախել 16000 ուսուցում։ Եթէ բարոյականը—ձրն է նա, ինչով «Մուրճը» ցոյց տուեց ալտպիտի լալտողութիւն։ Եթէ «Մուրճը» ունեցել է քիչ թէ շատ բարոյական լալտողութիւն, ալդ եղել է պ. Արասխանեանցի օրերով, երբ նա որքան և իցէ խմբագրուում էր ամսագրին վալել անկախութեամբ և ինքնուրոյնութեամբ։ Այնուհետև նա անցնելով ինքնուրոյնութիւնից զուրկ մարդկանց ձեռքը, դարձել է «Մշակի» արբանեակը և դրկուել հասարակութեան լուրջ մասի լարգանքից։ Ա. Ժմեան «Մուրճը» խմբագրուում է «Մշակի» հաճութեամբ։ Իսկ «Մշակը» խմբագրուում է մի անձի ձեռքով որի դրականական գոհարներն են Վրճինի «Սանրանկարները» որ ամենաթունդ մշակակաների անգամ մաղձն են շարժում իրանց անհամութեամբ։

Վերապատուելի հայրեր, եթէ ուզում էք, որ ձեր անլալտ տետրը արժանանալ մեր ուսանալու իրաւունքին, ընտրեցէք աւելի մաքուր ճանապարհ։

Սղէք կաթօրիկ, ինչպէս և եղել էք մինչև այժմ, անկեղծօրէն քարոզեցէք ալն, ինչ որ իրօք ձեր հոգին է թելադրում։ Ձեր լեզուն թող լինի ձեր սրտի թարգմանը, և ալալուով դուք աւելի լարգանքի կարժանանաք։

### «Մուրճ»

Գրեթէ մտա հարիւրամեայ գոյութեան ընթացքում՝ կուկասի պարբերական մամուլը երբէք մի տարուալ ընթացքում ալնալտի արտաքին փոփոխութիւնների չի ենթարկուել, որպէս ներկալ 1902 թուականին։ Մեր խօսքը նոր թերթեր երկան գալու և գոյութիւն ունեցողների ձեռքէ ձեռք անցնելու մասին է։

«Մուրճ» ամսագիրը, որ երկու տարի սրանից առաջ պ. Արասխանեանից անցաւ պ. Կ. Կրասիլնիկեանին 24,000 լուրքի զճարով, ալ տարուանից անցաւ նոյն ամսագրի ալալատակից պ. Լ. Սարգսեանին և վաճառական պ. Պողոսեանին 16000

ուրբիով Պ. Կրասիլնիկեանի խմբագրութեամբ «Մուրճը» կրեց մեծ նիւթական միաստ: Ինչպէս մեզ հաղորդում են, պարոնը երկու տարուա ընթացքում ունեցել է 11000 ու. միաստը հայրեւելով արն 8000 ու. միաստը, որ ստացուել է էփան վաճառումից, վնասի գլխաւոր պատճառներն են. նախ և առաջ ի հարկէ, հալ մամուլի ընդհանուր անտը՝ բաժանորդների սակաւութիւնը և ապա մշտական աշխատակիցների անընդունակութիւնը: «Արտարտոգուած» «Մուրճը» չունէր իր մշտական աշխատակիցների մէջ մի, ընդհանուր համակրութիւն վայելող կամ տաղանդաւոր գրիչ, որ կարողանար գրաւել հասարակութեան սէրը և սիրելի դարձնէր ամսագիրը: Ուստի կամայ ակամայ «Մուրճը» պիտի մնասուէր ոչ միայն նիւթապէս, այլ և բարոյապէս, և մնասուեց նոյն իսկ իւր մոլեռանդ պաշտպանների աչքում: Այժմ «Մուրճը» պիտի հրատարակուի պ. Լ. Սարգսեանի խմբագրութեամբ, մի անձի, որ ղեռ ոչ մի անուն չունի հալ գրականութեան մէջ:

«Аргonautъ» լրագիրը պ. Խաչատրեանից անցել է պ. Ռուբէն Յովհաննիսեանին, «Արձագանքի» խմբագրի որդուն և նոյնմբերից պիտի հրատարակուի իբրև շաբաթաթերթ «Кавказская Жизнь» վերնագրով: Պ. Ռուբէն Յովհաննիսեան վերջին 3—4 տարի աշխատակցելով տեղական ուսու մամուլին, ցոյց տուեց բարեխիղճ հրատարակախօսի և շիտակ մտածողի ընդունակութիւն—արժանատրութիւններ, որ ճրագով պիտի փնտռել հայերի մէջ: Պէտք է լուսալ, որ իբրև անկախ տէր մի օրգանի պ. Յովհաննիսեանը, հատարարիմ կլինալ իւր դասնանքին և ընդհակառակը կաշխատի աւելի եռանդով ծառայել անկաշառ հրատարակախօսութեան սուրբ զրօշին:

«Кавказский Вестникъ» համակրելի ամսագիրը, որի նըպատակն է գլխաւորապէս լինել թարգման Արևելեան ազգերի գլխաւորապէս հայերի և վրացիների կեանքի և գրականութեան, եռանդուն և անխոնջ պ. Բ. Ղորղանեանից անցել է գերմանական նախկին ուսանող պ. Գ. Սելիք-Վարագեօզեանի ձեռքը, որ արդէն հաստատուած է ժամանակաւոր խմբագրի պաշտօնում: ամսագիրը առաջիկայ լուստարից կսկսուի հրատարակուիլ նոր խմբագրութեամբ: Պէտք է լուսալ, որ նա մնալով իւր նախկին համակրելի ուղղութեանը հաւատարիմ, աւելի կընդարձակէ իւր բաժինները: Հայ կեանքի և հալ գրականութեան վերաբերմամբ պէտք է ապահով լինել, որ նրանց ուշադրութեան արժանի երևութները ճիշտ կարձանագրուին ուսու ամսագրում, որովհետև պ. Սելիք-Վարագեօզեանին մեր կեանքին և գրականութեան մօտիկ ծանօթ և անկաշառ ուղղութեան տէր մարդ ենք ճանաչել մինչև այժմ:

Бакинскія Извѣстія— դա մի նոր լրագիր է, որ սկսել է հրատարակուել Բազում: Լրագրի ղեկավար հրահրուած է պ. Յուլ. Խաչատրեան, «Аргонавтъ»-ի նախկին տնօրէնը, իսլամամուլ «Каспій»-ին չարաչար լուղուած է, վասն զի նոր լրագիրը արդէն սկսել է լաջող մրցել նրա հետ: Պ. Թովկիբաչեի օրգանը, որ լամառութեամբ ոչ մի ախուր երևոյթ տեղական թուրքերի կեանքից չէր արձանագրում և սիրով տեղ էր տալիս ոմն Աղայեվի իսլամամուլութեան դառանցանքներին, այժմ ստիպուած կը լինի մի փոքր զսպել իրան և այնպիսի մեծաքանակ վարձ չը վերցնել իւր թերթում տպուող լայտարարութիւնների համար:

### Մ Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- Ն. ԳՕԲՐՈԼԻԻԲՈՎ. Աղէքսանդր Գավացցի քահանան և իր քարոզները. Թարգմ. Գէորգ ք. Մկրտումեանց. Ս. Պ. Բ. 1902.
- ԻՈՍՐՈՎ. Ծիրանի արևելքը. Փարիզ. 1902.
- Ա. ԳՈՒՄՊԼՈՎԻՉ. Հասարակական թէօրիաներ. Թարգ Ս. Սամսէլեան. Թիֆլիզ 1902
- Մ. ԳՕՐԿԻԻ Մի անգամ աշնանը. Թարգմ. Ս. Շահումեանցի. Թիֆլիզ 1902
- MARS. Գոլրը. պատկեր. հրատ. Յ. Յովսէփեանի. Բազու 1902
- ԼԻՆՉ. Արմենիա. գրեց Պ. Տօնապետեան. Լօնդօն 1902
- Հալոց նոր վկաները. 2 հ. (1155—1843) ժողովրդական հրատարակութիւն, կազմեցին Յ. Մանանդեան և Հ. Աճառեան. Վաղարշապատ 1902
- ԲԺ. Ն. ՏԵՐ ԻՍԱՀԱԿԵԱՆ. Դիֆտէրիա. Աղէքսանդրօպօլ 1902
- ՊՐՕՅ. Ի. ԲԵՐԴԻՆԿՈՎ. Նոր պետութեան վերաբերմունքը դէպի կրօնը. սուս. Թարգմ. Գ. Ալթունեան. խմբ. Ս. Տիգրանեանի. Աղէքսանդրօպօլ 1902